

ՄԱՍԻՍ

Շ Ա Ք Ա Ք Ա Ք Ե Ր Ք

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

50^{րդ} ՏԱՐԻ, ԹԻԻ 35

(ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ)

I ՍԵՊՏԵՄԲԵՐ 1901

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ ՄԸ	Կ. Ս. ԻԹԻԻԺԵԱՆ
ԳԵՂԵՑԿԻՆ ՀԱՆԻԷՊ (ՈՏԱՆԱՆՈՐ)	ԱԼՓԱՍԼԱՆ
ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ԱՊԱԳԱՆ. Տղուն շարժումները	Գ. ՊՈՒՊԼԻ
ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆԸ	ՅՈՎՀ. ԳԱԶԱՆՃԵԱՆ
ՆԱԽԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ 1900 Ի ԱՐՈՒԵՍՏԱՀԱՆԴԵՍԻՆ ՄԷՋ	Յ. Թ. ՀԻՆԴԼԵԱՆ
ՌՈՒՍ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ Բարանցին	Թարգմ. Ա. Ն. Թ.
ՅՈՒՇԱՏԵՏԻ	

Դիս շաբաթաբերքի տարեկան բաժանորդագրին է Կ. Պոլսոյ համար ԲԱՌՍՈՒՆ ղրԵ. եւ գաւառներուն համար ՅԻՍՈՒՆ ղրԵ., կօնխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Ֆրանք կամ 5 բուլլի: Թղթատարական ծախքը խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ կամ եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկէն: Մասիս հրատարակ կ'ելլէ ամէն շաբաթ առտու, եւ կը զտուի Բերայի բոլոր ծխավաճառներուն ու Պանչե-Գաբուի ջրավաճառներուն խանութները, ինչպէս նաեւ Ղալաթիոյ, Պոլսոյ եւ բոլոր արուարձաններու լրագրավաճառներուն ֆոյլ:

Չեմքէ կը ծախուի ՀԱՏԻ 40 ՓԱՐԱՅԻ

ՀԱՍՏԻ

دو علیہ غلطہ «مسیس» غزنی ادارہ سی

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ»

Կ. Պոլիս, Ղալաթիա, Նորասումկեան խան

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

ՏՈՐԲ, Վ. Մ. Թ. ՀԻՆՂԵԱՆ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Բերա, Սիբի ԵՄԵԻՔ. արարք. ՆՕ. 3

Ամէն օր կէս օրէ վերջ, վիրաբուժական եւ Արուեստական ամէն տեսակ աշխատութիւններ՝ ամենավերջին նրբութեամբ պահանջմանց համաձայն :

ԳՂ. ԵՂ. եւ ՇՔ. տառաւորները ԶԱՐԻՖԵԱՆ Գեղարան ի Գուլմ-Գաբու :

ՍԱԳԱՅԱՆ ՏՊԱՐԱՆ

Սագաեան Տպարանը անմիջական կերպով պէտք ունի քաջավարի գրաչարի մը, գոհացիչ շարաթական :

ՏՈՐԲ, Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ, ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 10

Բացի սովորական ներքին հիւանդութիւններէ՝ կը դարձանէ մասնաւորաբար, նոր մեթոտներով եւ խնամով ստամոքսի, աղեստ, միզական ճարտարներու հիւանդութիւնները, ջղային տխրութիւնները, զաղխական ախտերը (սիֆիլիս եւլն) եւ մորթի հիւանդութիւնները :

Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս օրէ վերջը :

ԻԻՆԻՕՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՅ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

ՀՐԴԵՀԻ ՃԻԻՂ

Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ վնասք	240,000,000 Քր.
1899ին գանձուած ապահովագրին	19,500,000 »
Գրամագլուխ եւ պահեստ	105,000,000 »
Ապահովագրեալ գրամագլուխ	18,000,000,000 »

ԿԵՆԱՅ ՃԻԻՂ

Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ վնասք	99,000,000 Քր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253,000,000 »
Գրամագլուխ եւ պահեստք	150,000,000 »

որ ընթացիկ ապահովագրութեանց դուտարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիօն»ի ապահովագրելոյց կ'ընծայէ հսկայ երաւիաւորութիւն մը **ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:**

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց գեղչեալ գիներով : Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները : Շահարաթիւններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիօնի ապահովագրուողք **ԶԵՐԾ** են այն վնասներէն եւ յուսախաբուրիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահարաթիւններու բաւոյման (accumulation des bénéfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրսեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին :

Ընկերութեան գրամատուցն է **ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ**

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Կ. Պոլիս, Կալարա, Թահսապուրուն խան, Օսմ. Պանֆային դիմացը

Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ

ՄԱՍԻՆ

50^{րդ} ՏԱՐԻ

— I ՍԵՄՏԵՄԲԵՐ 1901 —

ԹԻԻ 35

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ ՄԸ

—>—<—

Արեւելք լրագրին Օգոստոս 10 եւ 11 թիւերուն մէջ Յ. Մրմըրեան ստորագրութեամբ բարեկենսական բողոքագիր մը կարդացի⁽¹⁾, որով յիշեալ էֆէնտին դառնապէս կը գանդատէր Իզմիրեանց Կառկի Յանձնաժողովին դէմ, որ իբր թէ ինձմէ թեւազրուելով չէր ուզած վարձատրել իր (Մրմըրեանի) յօրինած Հին օրեր եւ այդ օրերու անիրանները մակագրով գրական երկը :

Արդարեւ Իզմիրեանց Կառկի Պատ Յանձնաժողովն իմ մանրակրկիտ քննութեան յանձնած էր այդ գործը 1900 Մարտ 7 թուագրեալ Պատրիարքական պաշտօնագրով մը, բայց ես, որ ժամանակակից գտնուած եմ վերջին դարու ամիրաններուն մեծ մասին, առաջին տկնարկով անոր մէջի խոշոր սխալներն ու անտեղեկութիւնները տեսնելով, հրաժարած էի առաջարկուած մանրակրկիտ քննութենէն, եւ քանի մը պարզ գիտողութիւններով Յանձնաժողովին վերադարձուցեր էի ձեռագիրը :

Աւասիկ գրած նամակիս պատճէնը .

«Ամենապատիւ Սրբազան Հայր, Նախագահ Իզմիրեանց Գրական Յանձնաժողովին :

«Մրմըրեան Յարութիւն էֆէնտինի յօրինած հին օրերու ամիրաններուն պատմութիւնը կամ հաւաքածոյն, զոր Պատ. Յանձնաժողովը հաճեր է նուազատիւ մանրակրկիտ քննութեան յանձնել, առաջին տկնարկով հետեւեալ գիտողութիւնները կը թեւադրէ ինձի :

(1) Հիւանդ ըլլալու պատճառաւ, չկրցի ժամանակին կարգաւ եւ անմիջապէս պատասխանել :

«Ըստ իմ խոնարհ կարծեաց, այդ գործը, եթէ պէտք եղած կերպով գրուի, կրնայ «կարեւորութիւն ունենալ իբրեւ վերջին քառնի մը դարերու մէջ երեւցած նշանաւոր «ազգայնաց մէկ ցանկը՝ հանգեթմ անոնց յաշատակելի գործերով. իսկ իբրեւ սոսկ աւիրայական պատմութիւն, ներուի ինձ ըսել, բնաւ նշանակութիւն չունի, որովհետեւ այդ պիտակ տխուր կրողներուն աւանանք մասը բարոյական եւ մտաւորաւ կան արժանիքէ զուրկ ապարդիւն եւ անպիտան անձինք էին, չըսեմ աւելի :

«Գալով այդ աշխատասիրութեան մէջ «տրուած պատմական տեղեկութեանց, մէկ-«դի թողով նախորդ դարերու վերաբերեալ «ներն, որք զրեթէ մեծ մասամբ կտակա«ծելի կամ անվաւեր ազրիւրներէ քողուած «են, զորս զիւրու կրնայ նշարել Պատ. «Յանձնաժողովը, վերջին դարուն մէջ (1800 «—1870) յիշատակուած անձանց վրայ տըր«ուած տեղեկութեանց մէջ մանաւանդ բա«զում սխալներ կան, որոց մի քանին նոյն «իսկ ձեռագրին մէջ նշանակած է կարմիր «մեղմուկ գրիչ մը⁽¹⁾, եւ որոց մնացեալներն «ալ կրնան նշարել ժամանակակից տեղեկ «անձինք : Օրինակի համար, ամիրաններն եւ «րեք աստիճանի բաժնուեր են, եւ ամէն մէկ «աստիճան ալ երեք դասակարգի, այն է ին«նեակի դասակարգութեան, որուն մէջ առա«ջին աստիճանի ծանօթ ամիրաններ երկրորդ «եւ երրորդ աստիճաններն իջած են, երրորդ

(1) Ետքէն իմացալ որ Յանձնաժողովին երիցագոյն անդամներէն մէկն է եղեր :

«չորրորդ եւ աւելի ոտորին աստիճանի ան-
«նշան անձինք, հասարակ լուսնայափոխներ
«եւ մինչեւ իսկ արհեստաւորներ, երկրորդ
«եւ երրորդ աստիճանի ամիրաներ կոչուելու
«պատուոյն արժանացած են :

«Անկողմնակալութեան կամ անաշուու-
«թեան մասին ալ նկատուելութեան արժանի
«կէտեր կան : Մասնաւորապէս արժանայի-
«շատակ Պէզճեանի դէմ յայտնի հակակրու-
«թիւն մը կը տեսնուի, որով երկրորդ աս-
«տիճանի ամիրայի մը չափ ալ արժէք չէ
«ընծայուած անցեալ դարու ամենէն մեծա-
«գործ եւ մեծանուն հայազգիին :

«Նկատուելութեան արժանի կէտ մ'ալ սա
«է թէ վերջացած դարուն մէջ ամիրա տիտ-
«ղոսը կրող անձանց մեծագոյն մասին զա-
«ւակներն ու մերձաւոր ազգականները դեռ
«ողջ ըլլալով, կարելի չէ հրապարակաւ ու-
«ղիղ կամ անաշու գատատուան ընել անոնց
«վրայ եւ մինչեւ իսկ ներկայացեալ գործին
«մէջի սխալներն ուղղել՝ առանց բռնն գործ-
«դոհութիւններ եւ անտեղի վէճեր յարուցա-
«նելու ներկայ լրագրական պոռոտ հրապա-
«րակին մէջ :

«Այս կէտերն են ահա նուազագոյն աչքին
«զարկածները, զորս խոնարհարար Պատ. .
«Յանձնաժողովիդ ուշադրութեանը ներկա-
«յայնելով, կը խնդրեմ որ այդ պատմական
«լրջութենէ ու ճշգրտութենէ զուրկ տեսակ մը
«գրական վէպին մանրակրկիտ քննութեան
«տարապարտ աշխատութենէն զիս զերծ
«թողլով, ուրիշ առաւել ձեռնհաս եւ միան-
«գումայն երկայնամիտ անձի մը յանձնելու
«բարեհաճիք, որուն համար կանխաւ խորին
«շնորհակալութիւնս մատուցանելով, մնամ. . .
20 Մարտ 1900 Կ. Ս. Իսթիճեմ

Այս նամակս ընթերցողներուն կը թողու-
դատել թէ որ եւ է պատասխանատուութիւն
կրնա՞յ ծանրանալ իմ վրայ, քանի որ չեմ
ստանձնած այդ գործին մանրակրկիտ քննու-
թիւնն, եւ քանի մը վարկաբարձի գիտողու-
թիւնն⁽¹⁾ միայն ընելով հրաժարած եւ խընդ-

րած եմ Պատ. Յանձնաժողովէն որ ուրիշ ա-
ւելի ձեռնհաս անձի մը յանձնելու բարե-
հաճի :

Արդ, Յ. Մամբրեան ՀՓ. որ քննութեան
գործն ինծի յանձնուած միջոցին տուելու կու-
գար, կը քծնէր, կը կոտորաւէր առջեւ, եւ
կը շողմէր զիս իրեւ միակ ձեռնհաս այդ
գործին, եւ երբ հրաժարելու որոշում յայտ-
նեցի իրեն, սաստիկ տրամեցաւ, յուզուեցաւ
եւ շատ աղաչեց որ չհրաժարիմ, այժմ իրու-
ղութիւնը խեղաթիւրելով՝ զիս պատասխա-
նատու բռնելու կ'աշխատի, իրր թէ իրեն
դէմ թշնամութիւն ունենալով՝ սխալ քայլ
առնել տուեր եմ Իզմիրեանց Յանձնաժողու-
վին, որ ինչպէս յայտնի է՝ առաջին կարգի
ձեռնհաս եւ խղճամիտ անձերէ կը բաղկա-
նայ, եւ որ բնաւ պատճառ մը չունէր եւ
չէր կրնար ունենալ՝ տառն կամ քառն լիբայի
շնչին գումարի մը համար որ եւ է անձի մը
կրքին կամ հաճոյքին թելադրութեանն ան-
սալու, որով՝ փոխանակ Մամբրեանի երկնա-
բերձ ներբողներուն արժանանալու, բանգա-
գուշական խմբմանքին եւթարկի :

Գանք իմ վրայ ըրած անտեղի ամբաս-
տանութեան թէ իրեն դէմ թշնամութիւն ու-
նիմ եղեր, վասն զի ինքը Տէրոյեկեց Յօհան-
նէս պատուելիին եւ Խաչատուր Միսաքեա-
նին յետամնաց իրարեկամն ըլլալով, ես ալ՝
ընդհակառակն՝ անոնց երբեմնի թշնամին,
իրեն դէմ ալ թշնամութիւն կը տածեմ. . . :

Խոչ անուն օլտք է տալ այս անձունի
որամտքանութեան, զառամա՞նք ըսենք թէ
զատանցունք :

Տէրոյեկեց Յօհաննէս պատուելիին հետ
կարծեաց անհամաձայնութիւն ունեցած եմ
արդարեւ ազգային մէկ քանի խնդրոց մէջ,
բայց թշնամութիւն բնաւ երբէք : Անձնագէտ
միշտ կը յարգէի զինքը, ⁽¹⁾ վասն զի կարծ-
եաց ազատութիւնը կը յարգէի եւ կը յար-
գեմ միշտ, ինքն ալ փոխադարձաբար զիս կը

(1) Յանձնաժողովը քննելով՝ ճիշդ եւ իրաւացի գտեր
է դիտողութիւններս եւ ուրիշ քննիչի յանձնելու պէտք չէ
տեսնուի :

(1) 1839ին Իսկիւտարի առաջին ճեմարանն աշա-
կերտութեան մտած օրէն ճանչցի զինքը 40 տարեկան
երեւթով յաղթանաակ անձ մը որ ուսումնասցետ էր եւ կը
սիրէր զիս «դատաւորն Պ. Կարսոյեան» կոչելով, եւ բոլոր
բակամութեան դէմ գրած վիճարանական յօդուածները՝
տպագրութեան տալու համար՝ ինձի օրինակել կուտար :

պատուէր : Ամէն անգամ իրեն հանդիպած ժամանակս ձեռքը կը համբուրէի , ա՛ն ալ ճակատս կը համբուրէր : Քանի մը նամակները կան քովս սիրալիր յարգանքով գրուած : ուզողը կրնայ տունս գալ եւ տեսնել : Միտաքեանին հետ ալ պահ մը գծուցայ , բայց ետքը ինք խղճահարելով գրասենեակս եկաւ , սիրտս առաւ եւ հաշտուեցանք : Հետեւաբար անոր դէմ ալ թշնամութիւն չունիմ :

Եթէ այս կամ ուրիշ որ եւ է պատճառով Յ. Մամբրեան էֆ. ի դէմ թշնամութիւն ունեւնայի , անշուշտ երես չէի տար իրեն եւ ասան մէջ ընդունիլ , ուր կը յաճախէր եւ ժամերով կը խօսակցէր հետս : Ես ալ կը յարգէի զինքն իրեւ յաջողակ գրիչ , բաւական հմուտ մեր հին եւ արդի լեզուներուն : Մինչեւ իսկ իր բարեւնականը հրատարակելն քանի մ'օր առաջ դարձեալ տունս եկած էր զիս տեսնելու , բայց հիւանդ ըլլալուս պատճառաւ չէի կրցած ընդունիլ :

Եւ որովհետեւ իր հրաշակերտին մէջ ներբողած անձերուն զիս թշնամի կամ հակակիր երեւոյնն էլ կ'ուզէ , այնպիսի գործեր ու խօսքեր վերագրած է ինձի , որք մտքէս անցած չէն երբէք : Օրինակի համար՝ լսեմ եւ եղեր իրեն թէ Պալեան ճարտարապետ Գրիգոր ամիրան պարզ բեկչպէր մըն էր : Բացարձակ սուտ : Պալեան Գրիգոր ամիրան արքունի ճարտարապետ ճանչցած եմ սկիզբէն ի վեր , եւ երբէք բեկչպէր : Կ'երեւի թէ Ներսիսեան Գրիգորն , որ յերաւի պարզ բէնչպէր մ'էր ասկէց 60 տարի առաջ եւ զոր այնպէս տեսած եմ , Պալեան Գրիգորին հետ շփոթեր է անգիտակցաբար :

Պալեան ճարտարապետ Կարապետ ամիրային դէմ ալ թշնամութիւն ունիմ եղեր՝ ներսեանի կուսակցութեան պետն է եւ Տէրայենցի մարդն ըլլալուն պատճառաւ :

Արդարեւ պահ մը գծուած կամ մանաւանդ գայթակղած էր ինձի դէմ ամանց բոսթանը հաւատալով , եւ լրագիրս չէր ընդուներ իր տանը դռնէն ներս : Բայց 1864ին Պէշիկթաշի թաղ . Սորհրդին անգամ քնարբւնելուս ամթիւ Տատեան արժանայիշատակ Յօսանէս պէյի միջնորդութեամբ հետը տեսակցիլս բաւական եղաւ իր գայթակղութիւնը

բժշկելու , եւ այնուհետեւ շատ սիրով էր հետս , եւ ստէպ տեսակցութեան կը հրաւրէր զիս :

Աւասիկ ուրիշ այլանդակ սուտ կամ մանաւանդ բաջաղանք մ'ալ , զոր իբր թէ իմ ծանօթներէս (1) լսած է եղեր : «Երբեմն կ'ըսեմ եղեր Միտաքեանի նոր աշակերտներուն համար թէ ես կը հաշտեմ , կը ճգնեմ , անոնք կը ծղիկն , վերջը չեկաւ , եւ զինքն ալ այն աշակերտներուն կարգը դասած եմ եղեր : » Ո՛րչափ բաւ , ո՛րչափ տաւ , ա՛յնչափ սուտ , խիտա գծուած տեսակէն , որ նողկանք կը պատճառեն ինձի :

Գանք հիմա իր ուրիշ կարգի խոշոր սուտերուն , զորս նայնպէս իր ընթերցողներուն կ'ընդհանրեւ եղած է՝ անոնց համակրութիւնը կամ սքանչացումը գրաւելու եւ ինձի ու Իզմիրեանց Յանձնաժողովին դէմ գրգռելու համար :

Ա. Իր անչափ խնամով յօրինած եւ խնդրայնիւթ եղած գրական հրաշակերտին պատրաստութեան համար 2000ի մօտ մասեաններ քրքրուեցին . . . :

Երկու հազարի մօտ մատեաններ՝ հարիւրի չափ երեսներէ բաղկացեալ եւ հազիւ 2000 բառ պարունակող գրուածի մը համար : Արդեօք Յ. Մամբրեան էֆ. կը հաճի՞ այդ 2000 մատեաններուն գո՛նէ հարիւր հատին անունը տալ , որք սեղանադրական հին ձեռագիր տետրակի մը հետ այդ ամիրայական խեղճուկ պատմութեան վրայ լիապատար ծանօթութիւններ տուեր են իրեն :

Բ. Կը յիշեն անշուշտ ընթերցողք թէ Մըրմըրեան էֆ. իր այդ հրաշակերտին երկու օրինակներուն առաջինն Իզմիրեանց Յանձնաժողովին յանձնած ըլլալով , քովը մնացած երկրորդ օրինակն ալ սրտին ցաւէն կրակը նետեր այրեր էր , եւ ասոր համար յատկապէս սղը մ'ալ յօրինելով հրատարակեց Գլուխս ողջ քուղքս մոխիր մակագրով , որ բաւական տխուր ապաւորութիւն մ'ըրաւ հրապարակին վրայ , եւ որուն համար կարեկից գրիչներ ալ օղբերգական երկար յօգուածներ հրատարակելով ազգին անփութութիւնը դատաւեցանք :

(1) Գրեմք մէկ հատին անունը յայտնել :

Բարեբաղդարար երկնային այցելութիւնն օգնութեան հասնելով, այդ այրած թուղթը յարութիւն առաւ մոխիրին մէջէն⁽¹⁾ եւ մինչեւ Վենետիկի Միփթարեանց վանքը ճանապարհորդեց, ուր հանգիստ նստած է հիմա :

Այս ալ նախորդէն ոչ նուազ ձախող տարփողանք (réclame) մ'է, որ զինքը նոյնպէս հանրութեան առջեւ ծաղրելի ընելու միայն կրնայ ծառայել :

(1) Ճշդիւ Նարեկացիին ըստծին պէս. «Որ զհուրք «կիզեալն, զհողմով հոսեալն եւ զծանեօք զազանաց ծախեալն ի քթմել ական նովին հիւծականութեամբ անպակաս «յարուցանես :»

Արդ կը հարցնեմ. պարզ յօդուածի մը մէջ այսչափ վրան բաց սուտեր յերևարողի մը յօրինած պատմութեան մէջ ալ բողբոս քմածին սուտեր գտնուիր տարօրինակ կամ խելքի զէ՞մ բան է :

Ասկէց աւելի բացատրութիւն աւելորդ կը համարիմ, յայտնելով միանգամ ընդ միշտ Յ. Մրմըրեան էֆի թէ ես իրեն թշնամի եղած չեմ երբէք եւ չեմ ալ կրնար ըլլալ, մանաւանդ այսուհետեւ :

Մարդիկ կան, որոց թշնամի ըլլալ չար ծեր . . . :

Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

ԳԵՂԵՑԿԻՆ ՀԱՆԴԵՊ

ԱՐԹԱՔԻՆ . . .

Գեղեցկին հանդէպ՝ մեր անուրբ հոգին
Տաւտաւ սեղծերու յոյզին ենթակայ՝
Բիբերու ներքեւ կայծեր բորբոքին,
Եւ միտքն յերկրէ — Մրմըրեան վրկայ —
Սիրային մի վեպ,
Գեղեցկին հանդէպ :

Ինչ որ փափուկ է, նուրբ ու գեղեցիկ,
— Կին, ծաղիկ, նրկար, ժրպիտ, երգ, բոչուն —
Հրապոյր մ'ունի գողտր եւ ազդեցիկ .
Չի՛ հարցունեւ սիրտն ի՛նչպէսն եւ ի՛նչո՞ւն .
Կը բուլնայ ըսեալ,
Գեղեցկին հանդէպ :

Երբ մին՝ գեղանի, միւսն . . . առափնի,
Երկու կիներ գան — Դըբուքեան նըծար —
Երկրորդին կուսանք զըրեք բունի՛ . . .
Առաջինն՝ ժայտուն եւ սիրայծաւ . . .
Վեհա՛նձն ենք, անվեպ,
Գեղեցկին հանդէպ :

Թե այս վարքն ազնիւ ե , այս տուրքն արդար . . .

« Այո՛ » կը մնջեն կոյսեր նորասի ,
Ռոննց աչքն անոյշ , այսերն են վարդ յար
« Քանի որ մեզի պէս շուտ փարասի
« Հոգւոյն երաշխեալ ,
« Գեղեցկին հանդեպ :

« Քանի որ Բարին — վիշտի՛ պալատան —
« Գեղեցկին բոյրն ե միա՛կ հարազատ ,
« Անո՛ր դրդումով կ'ընտրէ իրեն սան ,
« Եւ մեղադրանքն ձեռներն են ազա՛ս ,
« Եւք մեներն ի նեպ ,
« Գեղեցկին հանդեպ :

« Համբոյրներ բռնին ալեաց փրփուրեն . . .
« Մովու բաղանեաց գերանք կը ծաղկին . . .
« Եւ գրգուանք , գորով ու սե՛ր կը բուրեն
« Գրնալըյի լերկ , անշուք կղզեակին
« Ժայռե՛րն անգամ սեպ ,
« Գեղեցկին հանդեպ : »

Գրնալը կղզի
9 ծգոսոս 901

Ս.Լ.ՓԱՍԼԱՆ

ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ԱՊԱԳԱՆ

ՏՂՈՒՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

Գ.

Տղան դաստիարակելը՝ անոր կեանքի
կողումը օր մը լաւագոյն կատարելու
վիճակին մէջ դնել է՝

ՏԻՆԻՆ ՆԷՔԷՐ ՏԸ ՍՍՍԻՐ

Կեանքի առաջին ամիսներէն սկսելով՝
աղուն դրական կամ հաճելի զգացումներուն
օգնելու մասին մեր նախորդ յօդուածին մէջ
յիշուած Տոքթ. Սիքօրսքիի յանձնարարու-
թեանց վրայ պնդելը աւելորդ կը նկատեմ
մերազնէից համար : Ստուգիւ Կ. Պոլիս , Իզ-
միր եւ ուրիշ քաղաքներ՝ հարուստ կամ մի-
ջին դասակարգի, երբեմն ալ նոյն խի աղքատ

հայ ընտանիքներու մէջ, կեանքի առաջին օրե-
րէն սկսելով նորածինին առողջութեան , գո-
հունակութեան եւ զուարթութեան վերջին
ծայր հոգ կը տանի մայրը կամ դայեակը լա-
ւանտուութեամբ , տաքուկ անկողինով , գաղջ
լոգանքով , չափաւոր լոյսով , գոլորիկ երգե-
րով , ի հարկին նուշի իւղի նման իւղ խմ-
ցունելով եւ մեղմացուցիչ օշարակներով , բայց
զմբազդարար մեր նորածինները ընդհանրա-
պէս կը գրկուին մաքուր օդէ եւ չափաւոր
չարժքմաներէ եւ որ աւելի դատապարտելի է՝
սեղմուած չորերով , լաթերով խնդճ մանկան
ժափուկ անդամները ճնշումի տակ կը ճըգ-

ուին՝ արեան ազատ շրջագայութիւնը արդիւնքն աւտիճան : Եւ այս սեղմուած խանձարութիւն պատճառաւ է որ ստէպ տեսած ենք արդի սերունդին մէջ ծուռ ու մուռ սրունքներ , շեղումներ , ազդեցութիւններ որոնք այդ նորածինները չափազանց սեղմելու սխալ դրութենէն առաջ եկած են : Միայն գոհունակութեամբ կը տեսնուի որ քանի մը տարիէ ի վեր իրենց զաւակացը առողջութեան եւ ապագայ բարօրութեան նախանձախնդիր եւ ընտանորեալ ծնողք այդ սխալները , նախապաշարումները ուղղելու կը ջանան եւ աւելի առողջապահիկ կանոններով կը մեծցնեն նորածինները :

Մանկաբուսութիւնը , որ մեր ներկայ ս. սումնասիրութեան աւարկան է , կը զրազի յետոյ նորածինին առաջին երեւոյթներով , այսինքն շարժումներով :

Մարդս երկու տեսակ շարժումներ ունի , մին ակամայ եւ միւր կամուր : Ակամայ շարժումները ինքնաժին են , բնագոյումէ եւ զգացողութիւններէ (sensation) յառաջ կուգան , իսկ կամուր շարժումները ուղեղի մէջ դրոշմուած տեսիլներէ (idées) :

Նորածինին ամէն առաջին շարժումները իրենց նախնական արտայայտութեանց մէջ ակամայ են : Տեսիլ մը , մտաւորական ներկայացում մը , ընտրութիւն մը չունի որ կամուր շարժումներ արտադրեն :

Այս մանկային շարժումներէն ոմանք արտաքին տպաւորութենէ մը , պատճառէ մը առաջ կուգան , եւ ոմանք կարգ մը ներքին եւ բնածին պատճառներէ : Այս վերջին շարժումները տարբեր բնութիւններ ունին , ինչպէս դիտած է Պ. Կապրիէլ Քոնրէյրէ (1) : Այս շարժումներէ ոմանք ինքնարեքարար երեւան կուգան եւ ոմանք ալ սրտէն , ներքին պէտքերէ յառաջ կուգան եւ գոհացում կը պահանջեն :

Յրբ տղան տարիքով կը մեծնայ՝ իր կամուր շարժումները աւելի որոշ եւ հասկնալի կ'ըլլան . կը յայտնուի նաեւ այն նպատակը որուն հասնիլ կուզէ տղան , եւ ատոր յատուկ գործողութիւնը :

(1) *Տես* L'évolution intellectuelle et morale de l'enfant, par Gabriel Compayré.

Պ. Բրէէէր այդ շարժումներուն կատարեալ տիպարը չորս էական պայմաններու կը վերագրէ . Ա. Տեսիլ մը որ շարժումը կ'առաջնորդէ , Բ. Կատարուելիք շարժումին նախնապէս ծանօթութիւնը , Գ. Որոշ նպատակ մը , Դ. Այդ շարժումները կատարելու միջոցին ուրիշ տեսիլներ տածելու կարելիութիւնը կամ բնդունակութիւնը :

Նորածինին շարժումները թէ եւ ընդհանրապէս ակամայ եւ արտաքին կը կարծուին , բայց այդ շարժումները ըստ մեծի մասին յուզմունքներէ յառաջ եկած շարժումներու նախնիթացներն են :

Լոյսին զրգիւր , օրինակի համար , որ իր ուժգին փայլով նորածինին աչքերուն փափկութիւնը կը վիրաւորէ , մեզ կը բացատրէ ըստ բաւականի թարթիչներուն գոցուիլ , բայց չի կրնար երկեք բացատրել թէ ինչո՞ւ տեսն մը վերջը երբ տղուն աչքերը այժմ կ'առնեն՝ կը բացուին ըստ տեսնելու եւ իրերու տեսարանը ծածկող վարագոյրը վերցրնելու համար :

«Տղուն բնածին գործունէութիւնը կը սկսի սպասելով կամաւոր շարժումներու , որոշ , կանոնաւոր շարժումներով , ինչպէս է ստնտուութեան շարժումը , բայց խել մը շարժումներ ալ երեւան կուգան որոնք թէ եւ կամաւոր չեն , բայց իրենց տեսակին մէջ ներքին գործունէութեան արդիւնքն են : Պ. Պէնի ինքնաժին , Պ. Բրէէէր՝ մղեալ (impulsif) եւ Պ. Մարիոն՝ ինքնաշարժ կ'անուանեն այդ շարժումները : »

— Այդ շարժումները զգացողութենէ մը առաջ չեն գար . զգացողութիւնը բոլորովին օտար է ասոնցմէ : Աչքի կամ միւս զգայարաններու տպաւորութեանց հետեւութիւնը չեն : Կազմուածքի (organisme) ամէնէն խորին խաւերէն առաջ եկած են , որոնց գործունէութիւնը շարժիչ ջիւղերու արդիւնքն է (1) : Որչափ տղան լաւ անած եւ առողջ ըլլայ , որչափ ջղային դրութիւնը ուժով ըլլայ , այնչափ շարժումները կը շատնան :

(1) Ինչպէս ծանօթ է մասնագիտաց , մարդուս կազմուածքին ջիւղերը երկու տեսակ են . շարժիչ ջիւղերը (Les nerfs moteurs) եւ զգայուն ջիւղերը (Les nerfs sensibles ou sensitifs) :

Այս շարժումները որոնք զիպուածական են՝ աւելի կը նմանին այն շարժումներուն որոնք ընդդիպումէ կամ ճշուումէ մը առաջ կուգան, ինչպէս են տղուն ձեռքերու եւ ոտքերու անընդհատ խաղը, բայց ընդհանրապէս աննպատակ եւ անօգուտ են։ Այդ շարժումները թէեւ տղան տարիքով մեծցած առտեն՝ կը նուազին, բայց բոլորովին անհետ չեն րլլար։ Նոյն խակ խելահասները այդ տեսակ շարժումներ կ'ընեն։ Ունինք շարժումներ որոնք մեր գործերուն հետ յարաբերութիւն չունին ըստ, անօգուտ են եւ որոնց բուն պատճառը փնտռել եւ գտնել անկարելի է։

Այդ տեսակ շարժումներու մասին կը յիշեմ օրինակ մը։ Օր մը Նիւթըն կամ քսո Միլիթարեանց Նեւտոն՝ որ ծառէն խնձորի մը իյնալովը՝ ձգողութեան օրէնքը գտած էր, իր պարտէզին մէջ կը պաշտէր։ Իրեն ընկերակցող հետաքրքիր բարեկամ մը մեծ գիտունին կը հարցունէ թէ ի՞նչ պատճառաւ արեգական այս ինչ արբանեակները արեւին ձախ կողմէն կը դառնան՝ փոխանակ աջ կողմէն դառնալու։ — Ձեռ գիտեր, կը պատասխանէ Նիւթըն։

— Լաւ, կ'ըսէ բարեկամը, գտնէ բացատրէ ինծի թէ քաղած ժամանակի ինչո՞ւ համար թեւերդ կը շարժես։

— Այդ ալ չեմ գիտեր, կը պատասխանէ Նիւթըն համեստօրէն։

Միթէ այդ համեստ պատասխանը եւո՞ծ է երբեք մեր ժամանակակից հաւնագիտներու բերնէն։

Երբ մեծ գիտունը քաղած ժամանակ իր թեւերը շարժելու պէս ամենապարզ բանի մը բուն պատճառը չ'է հասկըցած՝ հապա մեզի պէս պարզ մահկանացուներս ինչպէ՞ս կրնանք ատանց խորը թափանցել եւ բացատրել մեր նմաններուն։

Այդ պատճառաւ է որ կը բաւականա՞նք միայն մեկնելով տղուն շարժումներուն զանազան երեւոյթները՝ մեզի առաջնորդ ունենալով մասնագէտ հեղինակներ։

Չարմանալի երեւոյթ մը՝ որ արժանի է ուշադրութիւն գրաւելու։ Մանաւանդ քու-

նէն արթննալէ վերջն է որ տղուն շարժումները աւելի զգալի կ'ըլլան, աւելի ազատ եւ հաճելի։

Երբ տղուն ուղեղը տակաւ առ տակաւ զարգանալու եւ շարժիչ կեդրոնները եւ զգայուն ջիղերը իրենց դերը կատարելու կը սկսին՝ այն ատեն զգացողութեան շնորհիւ արտաքին աշխարհի իրերու գաղափարները ծնելու կը սկսին եւ կը յառաջդիմեն աստիճանաբար։ Անդրադարձական գործողութիւն մըն է այս, որ կազմուածքի առաջին դրոշմէն առաջ կուգայ։ Ասոր առաջին արտայայտութիւնն ալ փոնքտալն է։ Երբ ցուրտին ազդեցութեան տակ՝ նորածինին թուքերուն մէջ ցուրտօղբ յանկարծ կը լեցուի, կը սկսի փռնքտալու, ինչպէս դիտած է Պ. Կապրիէլ Բօնթէյրէ։

Դրոշումէ եւ արտաքին պատճառներէ առաջ եկած շարժումներու իբրեւ ապացոյց նոյն հեղինակը կը յիշէ նաեւ Տարվինի հետեւեալ գիտողութիւնը։ «Երբ ծննդենէն եօթը օր վերջը Տօմիի ոտքին տակը թուղթի կտորով մը խաղտեցի՝ ոտքը ետ քաշեց ուժգին եւ ոտքին մատերը խաղցուց, ինչպէս աւելի հասակաւոր տղայ մը կ'ընէ երբ կը խաղտեն զայն։

Ինքնաշարժ (automatique) շարժումներու ապացոյց մըն է այս կէտը։ Երբ խաղով մը զրազած փոքր տղու մը ձեռքը բանալի մը կամ ուրիշ առարկայ մը կը դնենք՝ ափին մէջ կը սեղմէ զայն առանց զգալու թէ ի՞նչ կ'ընէ եւ պահ մը ետք՝ ինքը խաղով զրազած ըլլալով՝ այդ առարկան թող կուտայ անփոյթ որ ափին մէջէն իյնայ՝ առանց գիտնալու թէ ի՞նչ կ'ընէ (1)։

Անդրադարձական ուրիշ շարժումներէն են մարմնոյ միտերէն, մարտողութեան գործարանէն ծագում առնող եւ մանաւանդ մտաւորական կեանքի կեդրոնին աւելի մերձակայ գործարաններու շարժումները, ինչպէս շատ ուժգին լոյսին առջեւ թարթիչներու յանկարծ գոցուիլը, ընդհարումէ կամ հարուածէ մը զգուշանալու համար գլխու շարժումները, եւ այլն։

Ասոնք իրենց պարզութեան մէջ զգացող ջիղերու տպաւորութենէն առաջ կուգան եւ

(1) Տօմի՝ Տարվինին տղան էր։

(1) Այս գործողութիւնը դիտած է Պ. Պինէ։

հասկացողութիւնը տակաւին դեր մը չի խաղար այս շարժումներուն մէջ :

Սակայն երբ զգացողութիւնը կը մեծնայ , երբ գործարանները կը մարգուլին հաճելի կամ անհաճոյ զգացողութեանց ծնունդ տալով՝ այն ատեն անդրադարձական գործողութիւնները շարժումները թէեւ մեքենայական՝ տղուն զգացած հաճոյքին կամ ահաճութեան , մտաւալաւ վտանգի մը վախին կամ փնտռուած օգտակարութեան մը հետեւութիւններն են :

Տղայ մը որ նստած է աթոռի մը վրայ եւ ընթերցումով կը զրադի՝ կ'երթայ ստուերը փնտռելու՝ երբ արեգական տաք ճառագայթ մը կուգայ յանկարծ գլխուն զարնել , ինչպէս նաեւ երբ ցուրտը սրունքներուն կը զարնէ՝ երկուքը մէկ կը սեղմէ կամ արագ արագ կը շփեն զմոտեք տաքցնելու համար :

ԳԷՈՐԳ ՊՈՒՊԼԻ

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԵԱՆ

ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆԸ



ՄԵՐՍԷՏԵՍԻՆ

Մտացի հարցումը ու անոր պատասխանները հետաքրքրութեամբ կարդացի : Կը տեսնեմ թէ պատասխանողներուն մեծամասնութիւնը դեռ կանխակալ համոզումներու համեմատ կ'ըմբռնէ բարեգործութիւնը կամ նուիրատուութիւնը : Ինծի կուգայ թէ հարցումիդ ճիշտ պատասխանը տալու համար պէտք է քաւեզործութեան հոգեբանական վերլուծութիւնն ընել նախ ու գտնել թէ գլխաւորապէս ի՞նչ շարժառիթներ ունի ան :

Նոր բան մը չէ ապահովարար ըսելը թէ բարեգործութիւններու , նուիրատուութիւններու շատերը ցոյցի , փառքի կամ փոխադարձ շահու մը համար կ'ըլլան , կամ վերջապէս որ եւ իցէ անձնական նկատում կ'ուսնենան իրենց շարժառիթ , բայց ընդհանուր կարծիք մըն է նաեւ թէ բարեգործութիւններու այս գծով տեսակէն վեր կայ նաեւ բոլորովին այլասիրական զգացումէ շարժեալ զուտ գաղափարային բարեգործութիւնը : Ես սակայն այսպէս խորհողներէն չեմ :

Զուտ քրիստոնէական այլասիրութեան , բարեգործութեան գաղափարը գեղեցիկ utopie մըն է ըստ իս որ երբե՛ք իրականանալիք չունի : Մարդ իր կազմութեամբ , հոգեբանութեամբ անխուսափելիօրէն անընդունակ է գործնական կեանք տալու այդ հիանալի գաղափարին որ բնածի՞ք , բնորոյս գաղափար մը չէ մեզի համար : Նախնական մտրցուն համար արգէն բոլորովին անծանօթ էին այդ տեսակի գաղափարներ ու դեռ քաղաքակրթութեան մէկ քանի տառիճաններուն մէջ իսկ իրերը շատ տարբեր կերպով կ'ըմբռնուէին , թէեւ ամէնէն նախնական ժամանակներէն սկսեալ մարդիկ իրարու օգնած են եւ տարրական անձուկ այլասիրութիւն մը գէթ գոյութիւն ունեցած է :

Գաղափարային , համամարդկային լայն այլասիրութիւնն ուրեմն զարգացեալ քաղաքակրթութեան մը ստեղծած ու մշակած եւ կրօնքին նուիրագործած մէկ իտէալն է , եւ ինչքան ալ պատրուկ երեւութով ներկայանայ ան , բացարձակապէս որ եւ է նկատումէ զերծ , անշահախնդիր այլասիրութիւն եղած չէ ու չի կրնար ըլլալ :

Մեր բոլոր գործերը , մեր ամէնէն ազնիւ համարուած արարքներն իսկ շատ անձուկ կերպով մեր եւին չորջը կը դառնան եւ միայն անոր որ եւ է գոհացում մը տալու համար է որ կը կատարուին : Ամէն բարեգործութիւն կամ նուիրատուութիւն հակառակէս ծագում կ'առնէ մեր եւին տհաճութիւն կամ վիշտ պատճառող զգացումները բառնալու , կամ հակառակը՝ մեր եւին հաճոյք մը պատճառելու հարկեցուցիչ փափաքէն սրուն մէջ գիմացինին վիշտը ամոքելու կամ անոր մէկ կարօտութիւնը լեցնելու նկատումը ստորադաս կը մնայ :

Զորօրինակ , թշուառութեան մը աղեխարշ տեսարանէն ազդուելով երբ նպաստ մը , օգնութիւն մը կ'ընենք , կը կարծէ՞ք որ մեր արարքին շարժառիթը այդ թշուառութիւնը ամոքելն ըլլայ միայն , երբե՛ք : Թշուառութեան տեսարանը մեզի կը պատճառէ իրական վշտակցութիւն մը , եւ որովհետեւ մեր զգացած այդ վշտին ամոքումը այն թշուառութեան պատճառներուն բարձումէն կա-

խում ունի, մենք սիրայօժար կ'ընենք նպաստը եւ ատամ կը վերստանանք մեր խոն-գարեալ հոգեկան անդորրութիւնը։ Ասոր ապացոյցն այն է որ երբ մէկը մեզմէ նպաստ խնդրէ բացակայ աղքատի մը համար որուն վիճակը չենք տեսներ, շատ քիչ բարեթոթա-րութիւն կ'ունենանք տալու, որովհետեւ հե-ռակայ, չտեսնուած թշուառութիւն մը մեր վրայ չընեն պէտք եղածին չափ վշտառիթ աղքեցութիւն մը սրպէս զի զայն փարատելու համար ստիպուէինք ուղղած նպաստը տա-լու։ Ասոր համար է նաեւ որ թշուառութեան մը կարի պերճախօս եւ յազիչ նկարագրու-թեանը հետ միացած նպաստի խնդրանք մը ընդհանրապէս կը յաջողի, որովհետեւ այդ նկարագրութիւնն իսկ կը բաւէ խորին ցա-ւակցութիւն մը առաջ բերելու ունկնդրին վրայ, մինչդեռ ցամաք կամ անպատշաճ ձեւի մը տակ եղած նպաստի խնդրանքը որ չազ-դեր ունկնդրին, ընդհանրապէս կը մերժուի։

Կը տեսնուի ուրեմն թէ բարեգործու-թեան շարժառիթը հաւակրութիւնն է։ Մարդ-կային բնաւորութեան մէջ շատ զօրեղ մի-տում մըն է դիմացինին նմանելու ձգտումը։ Երբ մեր դիմացինը կը խնդայ՝ մենք ալ խն-դալու փափաք մը կը գգանք, երբ կուլայ՝ մեր ալ աչքերը արցունքոտիլ կը սկսին։ Երբ մէկը մեր առջեւ հիւանդութեամբ կամ ցա-ւերով կը տառապի՝ մենք ալ կարծես թէ կը գգանք նոյն ցաւերը։ Այս համակրական դիւրազգածութիւնը քաղաքակրթութեան ա-ռաջացման ու ջղայնութեան աւելնալուն հետ մէկտեղ աւելնալու վրայ է, բարեգործու-թիւններուն հետգհետէ տալով լայն, սրտառուչ ու կարծես թէ գաղափարային հանգամանք մը։

Առանց այդ բնական հակամիտութեան՝ փի-լիսոփայութիւններուն ու կրօնքներուն ստեղ-ծած ո՛չ մէկ գաղափարը պէտք եղածին չափ հզօր պիտի ըլլար մարդիկ իրերօգնութեան մղելու։ Ու ցորչափ մեր կազմութեան մէջ կայ ու կը մնայ այդ հակամիտութիւնը որ ու-զենք չուզենք զմեզ մասնակից կրնէ ուրիշնե-րու վիշտերուն եւ ուրախութիւններուն, բա-րեգործութիւնն ալ պիտի շարունակուի ընդ միշտ այլ եւ այլ ձեւերու տակ, միշտ իրեն

շարժառիթ ունենալով անձին գոհացումը, ու երբեք ընկերը սիրելու կամ անոր օգնելու պարտականութեան մը հարկադրիչ գիտակ-ցութիւնը։

Բնական զգացում մըն է նաեւ որ մարդ ինչքան կը խորշի տհաճութենէ, նոյնքան կը փնտռէ հաճոյքը։ Ապա ուրեմն եթէ մեզի տհաճութիւն առթող պատճառները վերցնե-լու համար կը բարեգործենք, նոյնքան ի-րատար կրնենք նոյնը մեզի հաճոյք տուող պատճառներ հայթայթելու համար ալ, եւ այս պարագային մէջ ալ դարձեալ եսին գո-հացումն է բարեգործութեան շարժառիթը։ Նոյն իսկ ուրիշի մը թշուառութեան հանդէպ մեր զգացած վշտակցութենէն շարժեալ երբ կը բարեգործենք, անոր մէջ ալ խառնուած է հաճոյախնդրութեան զգացում մը, զի ու-րիշի մը թշուառութիւնը սփոփելով անոր ու-րախութիւն պատճառելուն եւ երախտագի-տութիւնը գրաւելուն մէջ մենք ալ անձնա-պէս անբաղդատելի հրճումնք մը կ'գգանք։ Ասոր համար է նաեւ որ շատ անգամ ասանց որ եւ է համակրական զգացումէ թելադրուե-լու, կը բարեգործենք եւ նպաստ կուտանք լոկ ցոյցի եւ փառքի համար որուն մէջ մենք անձնական գոհունակութիւն մը կը գտնենք։ Ասոր համար է որ երբ բարեկամ մը կամ ծանօթ բարձր անձնաւորութիւն մը կը ներ-կայանայ մեզի նպաստի համար, չենք մեր-ժեր, կուտանք եւ աւելի կուտանք, որովհ-հետեւ տոտով մեր բարեկամին կամ այն ծա-նօթ բարձր անձնաւորութեան առջեւ կուզենք մեր համարումը բարձր բռնել, ինչ որ մեր անախառնութիւնը կը փայտայէ։

Եւ ահա ճիշտ այդ է պատճառը որ գե-ղեցիկի մը աւելի կուտանք քան թէ տգեղի մը, երբ երկուքը միեւնոյն նպատակին համար կը ներկայանան, զի գեղեցիկին աւելի տա-լով անոր գոհունակութիւնը եւ համակրանքը գրաւելու եւ ասով մեր անձին հաճոյք մը աւելի պատճառած ըլլալու նկատումն ալ ու-նինք։ Ամէնէն բնական արարքն է այս մե-զի համար։ Մարդ իր բնութեան բերումըր ասկէ տարբեր չի կրնար շարժիլ նմանօրինակ պարագաներու մէջ։

ՅՈՎՀ. ԳԱԶԱՆԵԱՆ

ՆԱԽԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ

ԲԱՐԻՉԻ 1900Ի ԱՐՈՒԵՍՏԱՀԱՆԴԵՍԻՆ ՄԷՉ

Ով որ այցելած է աղգային կամ միջաղգային Արուեստահանդէս մը, գիտէ թէ ի՞նչ հրապուրիչ եւ հրահանգիչ դաս մըն է այն իրադրութեան՝ ամէն կարգի, ամէն հասակէ եւ ամէն արուեստէ անձանց համար: Առտուն կանուխ ներս կը մտնեն գերազանցապէս գործնական այդ զարոյցին փառաբարձականացիչ դռնէն, կ'անցնին ընդարձակ ահնախաղ սրահներէն, հազիւ ինքզինքդ կըրնաս ազատել ամէն մէկ քայլափոխիդ աչքերդ յափշտակող եւ ուշադրութիւնդ մոգող հրապոյրներէն արուեստից եւ գիտութեանց, ու կ'երթաս կը թաղուիս քու դատարանիդ ժողովածոյքին, յիշատակարաններուն եւ անթիւ պէսպիսութեանցը մէջ: Ու մինչդեռ, մատիա ի ձեռքին, կը ճգնին բովանդակել այն հազարաւոր գաղափարները որոնք դուրս կը ցայտեն այդ սրահներու ցուցադրութեանց ուսումնասիրութենէն ու բաղդատութենէն, երբեմն չես զգար թէ օրը տարաժամած է արդէն եւ առտուն թեթեւ նախաճաշէն ուրիշ անունդ չես առած տակուին մարմնոյդ, որուն վատակարելի խոնջութիւնն այն ատեն միայն կ'իմանաս՝ երբ ծանրացած զլուրդ վեր կը հանես՝ վաղիւ ժամադիր ըլլալու համար այդ անբարբառ բայց պերճախօս բարեկամներուն հետ:

Ո՛չ, անկարելի է այցելած ըլլալ Արուեստահանդէս մը եւ չցանկալ օգտուելու վերադարձին անոր հոգեպարար, ազնուացուցիչ եւ զարգացուցիչ դասերէն: Բայց, աւա՛ղ, ինչո՞ւ հարկ է որ փչուտ խոչընդոտներ ցցուն դիմացդ ու արգիլեն հոգւոյդ ամէնէն վեհ ցանկութեանց իրագործումը: Կը համոզուիս հարկին՝ որ կամքէդ տելի ընդգիմակաց է, կը ստիպուիս քիչ մը կրաւորական գիրք մը առնել եւ բաւականանալ ուրիշներուն զննութիւններովը, գիտողութիւններովը ու գաղափարներովը:

Դատարարական այս դարուն մէջ

ընական էր որ Բարիզի վերջին Արուեստահանդէսին ամէնէն շահեկան ու ամէնէն կատարեալ բաժանումն ըլլար այն՝ որ կը վերաբերէր կրթութեան: Այնպէս ալ եղաւ: Փրանսայի եւ ուրիշ երկիրներու մանկավարժական թերթերու յօդուածները, կառավարութեանց եւ մասնաւորներու կողմէ հրատարակուած բազմաթիւ հատորները միաբերան կը հաշակեն զատարարական յաղթանակը, առանց անտեսելու, քօղարկելու պահասութիւնները, զորս լեցնելու միջոցները ցոյց կուտան Արուեստահանդէսին՝ անթիւ գուժարուած ժողովները:

Արուեստահանդէսը իրադրութեան պատշաճական դաս մըն է, բայց Պէտք է որ մենք ալ օգտունք այդ դասերէն, հոգ չէ թէ հետեւէ: Փրանսական կառավարութեան հրատարակած երեք խոշոր հատորները, Արուեստահանդէսին մասնակցող երկիրներու հրատարակած հատորները, յիշատակարաններն ու մենագրութիւնները մեզ կը աեղեկացնեն կրթութեան գործին վերջին յառաջադիմութիւնները զանազան երկիրներու մէջ: Մասնաւոր հրատարակութիւններ մեզ կը բերեն կըշտադատութիւններ՝ կատարուած գործին վրայ, բաղդատութիւններ՝ զանազան երկիրներու կրթական գրութեանց մասին: Հետեւինք ի տես դրուած կրթական շարժման վերլուծենք յայտնուած գաղափարներն եւ ուսումնասիրութիւնները եւ փնտռենք թէ ի՞նչ նպաստ կրնան բերել անոնք մեր զարոյցներուն:

Աշխատակցութեան համետ բաժինն կը նուիրեմ այս գործին, յօդուածներու շարքով մը Մաքսի մէջ ի վեր հանելով նախակրթարաններու Արուեստահանդէսին ամէնէն էական կողմերը, մերձեցումներ հաստատելով զանազան երկիրներու եւ մեր նախակրթարաններու միջեւ, ցոյց տալով այն եղբակացութիւնները որ կրնան բղխիլ կատարուած բաղդատութիւններէն: Այս աշխատութեան մէջ հետեւած

եմ իմաստուն Մօնղաների խորհուրդին. «մեզուի նման հոսկէ հոնկէ կապտելով ծաղկանց հիւթը եւ շինելով այդ հիւթով մեզր մը՝ որ ոչ ուրց է եւ ոչ մարեմխոտ»:

ՇՈՒԽՏ • ՆՈՐՎԵԿԻԱ

Առաջին յօդուածս կը նուիրեմ Շուետ-Նորվեկիոյ, որոնց դպրոցական կազմակերպութիւնը ընդհանուր համակրութեան եւ գնահատութեան արժանացած է Արուեստահան. դէսին մէջ, ինչպէս բարձրութեւ, նոյնպէս եւ կրթական կազմակերպութեան տեսակէտով, մէկէ աւելի նմանութիւններ կարելի է գրտնել Սկանտինավեան թերակղզիին եւ Հելլենտական գաշնակցութեան միջեւ: Երկուքին մէջ ալ նոյն մասնաւոր հոգածութիւնը դրպրոցներու նկատմամբ, որ անոնց փառաց յիշատակարանները կը կազմեն: Ու վարժապետութիւնը թերեւս ոչ մէկ տեղ այնքան յարգի է որքան Չուիցերիոյ եւ Շուետ-Նորվեկիոյ մէջ: Իսպան, Նորվեկիացի մեծանուն թատերագիրը, Ֆրանսացի մատենագրի մը հետ ունեցած մէկ երկար տեսակցութեան միջոցին՝ «Դաստիարակին պարտականութեանց» մասին, յայտնած է, ի մէջ այլոց, հետեւեալ գաղափարները. «Դաստիարակի պաշտօնը ամէնէն զեղեցիկ պաշտօններէն մէկը կը թուի ինծի, ոչ միայն անոր համար որ ազնիւ պաշտօն մըն է այն, այլ նաեւ անոր համար որ պէսպիսութիւն կայ այդ գործին մէջ, եւ աղբիւր է պէսպէս ուրախութեանց: — Գործը դժուարին է, գիտեմ. բայց գործի մը դժուարութիւնն է ճիշդ որ արժէք կուտայ կեանքին: Մնաց որ, Դաստիարակը հանգստեան ժամեր, օրեր եւ ամիսներ ունի, իր ճաշակին համեմատ, կրնայ կարգաւ ու վերընթեւնուլ այն գիրքերը գրու մենք հազիւ ժամանակ կը գտնենք թղթմտեղու: Կրնայ երկար պտոյտներ ընել դաշտին ու գիւղին մէջ. կրնայ անձնատուր ըլլալ ինչ ինչ անտառներու եւ յոյժ օգտակար զուարճութեանց, զոր օրինակ՝ հանքաբանութեան, միջատաբանութեան, բուսաբանութեան, ճրկնարանութեան եւ ձկնորսութեան: — Անշուշտ ամէն գասակարգի եւ ամէն հասակէ մարդոց հետ ունեցած իր յարաբերութեանց մէջ,

Դաստիարակը երբեմն դժուարութեանց կը հանդիպի: Ամէնէն պզտիկ շէնին ինչպէս ամէնէն մեծ քաղաքին, ամէնէն համեմատ ժողովին ինչպէս ամէնէն հոյակապ Խորհրդարաններուն մէջ կազ ու կոխ անպակաս են: Բայց Դաստիարակը կրնայ, եթէ ուզէ, հետեւ կենալ շատ մը անպատեհութիւններէ: Իրիկուր, գեղեցիկ գիշերուան մը հանդարտութեան մէջ, թա՛ղ բանայ պատուհանը, ու անմիջապէս պիտի հասկնայ անգործութեան այն բարի խորհուրդը՝ զոր բնութիւնը երբեք չի մերժեր մարդուն: Չկայ ընկերական ապարէզ մը, գործ մը որ վարժապետութենէն աւելի նպաստաւոր ըլլայ ներքին կեանքին, այն միակ կեանքին զոր լիտի կ'արժէ ապրիլ: — Ուսմանց զանազանութիւնն ալ կը թուի ըլլալ տարր իրական ուրախութեան: Նախակրթութիւնը հեշտովի կերպով համայնագիրտական է եւ Դաստիարակը սովոր ունի, այսօր՝ բացատրելու երկրագործական կամ պարտիզամշակութեան խնդիր մը, վաղը՝ կարգաւ յստակ ու գեղեցիկ բանաստեղծութիւն մը կամ սորվեցնելու ժողովրդական երգ մը որ կը ցոլացունէ ժողովրդին հոգին, ուրիշ օր մը՝ ճառելու բարոյագիրտական նիւթի մը վրայ, որուն յանկուցիչ եւ գործնական հանգամանք մը պիտի կրնայ տալ առաւելներու, հէքեթներու, առածներու միջոցաւ. միւս օրը՝ մեկնել տալու իր աշակերտներուն թատերախաղ մը որ յարմար ըլլայ զանոնք զրօսեցնելու եւ հրահանգելու: Չկարծուի թէ բոլոր այս բաները շատ բարձր են տղոց համար: Գիւղացիներու կամ գործաւորներու զաւակները շատ մեծ արագութեամբ կ'ըմբռնեն բարոյականի եւ բանաստեղծութեան մեծ գաղափարները եւ հաճոյք կը զգան վսեմ բաներէ: Այդ կոյս հոգիներուն վրայ, ո՛ր եւ է սուրբ եւ ազնիւ խօսք կը դրոշմուի մէկ անգամէն եւ առ յաւէտ: Ստուգիւ, ապահով չէ՞ երջանկութիւնը Դաստիարակին, պայմանաւ որ կանոնաւոր կենցաղ մը վարէ: Դաստիարակը պէտք է միշտ, օրինակի համար, հաշտեցիկութիւն հանէ իր աշխատութեանց. «Այս տարի քանի՞ տղոց կարգաւ սորվեցուցի. — Բանի՞ տղոց աւանդեցի գիտութեանց տարերքը, սորվեցուցի պատմութիւն, բարոյագի-

տութիւն , եւլն : » Աշակերտաց անունները , անոնց կցած յիշատակութեամբ մը , պիտի երեւին տետրակի մը մէջ որ իրօք պիտի ըլլար ոսկեւնասեան մը : Թող ամէն Դատարարակ գործի սկսած օրէն ծանօթագրէ իր աւանդած ուսմանց եւ զայնս ընդունող հոգիներուն վերաբերեալ զիտադութիւններ : Այս կերպով արձանագրած պիտի ըլլայ իր կեանքի իրաւունքները եւ պատուոյ տիտղոսները : Ի՞նչ արդիւնքներ կարելի պիտի չըլլար ձեռք բերել միացնելով բոլոր Դատարարակաց ոսկեւնասեանները : Ազգին խնայական հաշուելիչիւր , բարոյական վիճակագրութիւնը , ստոյգ պատմութիւնը պիտի ըլլար այն : »

Ուզեցի քաղաքաւար հոս ներկայացնել Հոգեգեղներ , Կայրի քաղ , Պուարիկի տուն , եւ դեռ զանազան անուններով ա՛յնքան կրթիչ եւ յուզիչ էջեր գրող եւ մարդկային դատարարակութիւնը ա՛յնքան ազէկ սերտող Նորվեկիացի քերթողին խորհրդածութիւնները Դատարարակին երջանկութեան մասին , որովհետեւ կ'արժէ որ խոկանք այդ մտածմանց վրայ : Արգարեւ , բաւական տագորուած ենք « հոգւոց աւանդապահ » ի մեր պաշտօնին ազնուականութեամբը , մենք որ ա՛յնքան կըստորնացնենք երբեմն , չըսեմ յաճախ , պաշտօններու ազնուագոյնը : — Բաւական խորհած ենք սա ճշմարտութեան վրայ թէ՛ երջանկութիւն եւ դժբաղդութիւն դուրսէն չեն մտներ մեր մէջ , այլ մեր ներսիդին են : Ոչ ոք երջանիկ կամ ապերջանիկ է ի բնուստ : Երջանկութիւնը կը ստացուի ամէն օր , քիչ քիչ , կամքի ոյժով : Եթէ մենք , դատարարակներս , կ'ուզենք երջանիկ ըլլալ , պէտք է ուրախութեամբ եւ մաաղիւր փարինք մեր գործին , եւ ոչ թէ քրթմնջելով տրտնջալով : Աշխատիլ անխուսափելի հարկ մըն է ամէն մարդու համար : Իմաստունը ան է որ կը համակերպի գործին անողորմելի դժուարութեանց , կ'ազի , ինքզինքը կը վարժեցնէ՝ գործին ազէկ կողմերուն ուշադրութիւն բնել եւ չափանելու զարնել անոր գէշ կողմերը : այս կերպով գործը հետզհետէ սիրելի կը դառնայ եւ կ'ըլլայ տարր երջանկութեան : Եթէ երջանկութեան ձեւորան մը յանձնարարել պէտք ըլլար , Jules Payot ի L'éducation de la volonté ն պիտի

յանձնարարէի ջերմապէս եւ կատարեալ համոզմամբ : — Տկար , անշակ կամք մը ունենալուս , երջանկութեան գաղտնիքը չգիտնալուս համար չէ՞ դարձեալ որ Իպոնէնի յանձնարարած բնական վայելքներէն կը զրկենք ինքզինքնիս , մեր դատարարակներէն քանի՞ն իրենց արձակուրդի օրերը անցուցին բնութեան ծոցին մէջ , վայելցցին այն հեշտութիւնները որոնք ձրի կամ գրեթէ ձրի ըլլալուս համար չեն դադրիր ամէնէն մաքուրներն , ամէնէն առողջարարները ըլլալէ , երբ մօտակայ լեռը , անտառը , պարտէզը , դաշտը , դարատափը , ծովը , գետակը զմեզ կը հրաւիրեն վայելել իրենց նուիրած հեշտութիւնները , ինչո՞ւ խաթոտել , քէն ընել բաղդին գէժ որ կը մերժէ մեզ՝ կղզի կամ Պէօյլաքտէրէ օդափոխութեան երթալու փառասիրութիւնը : ինչո՞ւ երեսնիս կախենք կերասուրի չի հաւնող տղու մը պէս եւ ինքզինքս նիս փակենք տան մէջ , եթէ ոչ արձարանը կամ գինետան մէկ անկիւնը : — Վերջապէս , մեր դատարարակներէն քանի՞ն գոնէ տարին մէկ անգամ կ'ընեն իրենց խղճի քըննութիւնը եւ կը պատրաստեն « իրենց ճգանց հաշուելիչիւր » : քանի՞ն կը կատարեն աշակերտաց հոգւոյն այն կարեւոր ուսումնասիրութիւնը զոր կը յանձնարարէ Նորվեկիացի մատենագիրը , քանի՞ն կրնան ներկայացնել իրենց ոսկեւնասեանը , հայելի աշակերտաց հոգւոյն , լաւագոյն գիրքը մանկավարժութեան :

Կը տեսնէք թէ Իպոնէնի խօսքերուն մէջ առատ նիւթ կայ ուսումնասիրութեան , որ պիտի կրնար լեցնել Մաախի մէկ երկու թիւերը : Բայց պէտք է դադրեցնել հոս վերի խորհրդածութիւնները եւ միտել բուն նիւթին մէջ , որ է Շուեա-Նորվեկիոյ նախակրթարանաց կազմակերպութիւնը :

(Շարունակելի)

Յ. Ք. ՀԻՆԴԼԵԱՆ

ԳՐԱԿԱՆ ՆՈՒՌԻԱՏՈՒԹԻՒՆ

Տրամայի Թաղապետական բժիշկ Տոքթ. Յակոբ էֆ. Փախագեան , որ արձակուրդով մայրաքաղաքս եկած է , տարեկան մէկ օրինակ Մասիս նուիրեց իր ծննդավայրին՝ Օվաճըզի ազգ. վարժարանին :

ՌՈՒՍ

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՆԻՔՕԼԱՍԻԻՍՅԻԼՕՎԻՉ ԳԱՐԱՄՉԻՆ

(1766—1826)

Քարամզին է, Լոմոնոսովէ յետոյ, ուսն արձակ շարագրութեան երկրորդ հնարիչը։ Սա վերջնականօրէն ազատագրեց գայն ոչա վոն խնամակալութենէն, որ դեռ ծանրապէս կը ճնշէր անոր վրայ, մանաւանդ պատմական կամ առեւտրաօտական նկարագիր ունեցող երկերու մէջ. սա հիմը դրաւ ուսն վիպագրութեան, որ այնուհետեւ թաւական արձակ ասպարէզ գտաւ։ Սա իր երկիրն օժտեց առաջին պատմութեամբ՝ որ ստուգիւ արժանի է այս անունին։ Իր ուղեւորական նամակներուն մէջ գերազանց օրինակներ տուաւ այնպիսի մանաճիւղի մը՝ զոր իր հայրենակիցները դեռ մշտած չէին գրեթէ։ Յաջորդեցաւ նաեւ Եւրոպայի ուղագրութիւնը հրատարակ անոր վրայ. իր պատմութիւնը թարգմանուեցաւ գերմաներէնի, իտալերէնի, լեհերէնի ու ֆրանսերէնի (11 հատոր)։ Միւս գլխաւոր երկասիրութիւններն են՝ Մարֆա կամ Նուաճուած Նովկորոտ՝ պատմական նորավէպ, Զգայունն ու Անտարբերը, Հէք Լիզա, Ռուս Ուղեւորի մը Նամակները։

Քարամզին իրմով կը փակէ ԺԸ. Դարն ու կը բանայ ԺԹ.ը։ Նա դեռ չի վերաբերիր վիպական շրջանին, բայց Ռուսերուն ներշնչելով իրենց պատմական անցեալին գիտակցութիւնը, սլաժօն ազդեցութենէն ազատագրելով ազգային բարրապաշտը, նպաստեց նոր դրօշրոցին ճամբան հարթելու։

1

ԴԱՇՏԱՆԿԱՒ ՄԸ ՄՈՍԿՈՒԱՅԻ ՇՐՋԱԿԱՆՆԵՐԷՆ

(Քարամզինի «Հէք Լիզա» անուն գործին ներածութիւնը)

Մոսկուայի բնակիչներէն ո՛չ մէկը թերեւս

ինծի շարի կը ճանչնայ այդ քաղաքին շրջավայրերը. ո՛չ մէկը ինձմէ աւելի շատ անգամ դաշտ կ'երթայ. ո՛չ մէկը ինձմէ աւելի հաճոյք կը զգայ հետիտան, անձրագիր, ան նպատակ, գիպուած օրէն թափառելէ մարդագետններուն ու անտառներուն, լեռներուն ու դաշտավայրերուն մէջ։

Բայց ինծի ամէնէն աւելի հիացում կ'ազդէ այն տեղը՝ ուր կը բարձրանան Ս. Սիմոնի մենաստանին նոստատուներ ու գոթաձեւ աշտարակները։ Այդ լուրէն, աջ կողմի վրայ, աչքի առջեւ կը պարզուի գրեթէ բովանդակ Մոսկուան հանդերձ տուններու եւ եկեղեցիներու այն գարհուրելի դէզով՝ որ կը պատկերանայ հսկայաձեւ շրջատեսարանի մը երեւոյթին ներքեւ, վեհաշուք նկար մը, մանաւանդ երբ կը լուսաւորուի արեւէն, երբ արեւամուտի բոցանշոյլ ճառագայթները կը շողջղեն ոսկեճաճանչ անհամար գմբէթները, անհամար խաչերն երկնաբերձ։ Ոտքերուս ներքեւ կը տարածուին արգաւանդ, թաւախիտ, ծաղկափիւռ մարգագետններ. ետեւի կողմը, դեղնագոյն աւազներուն վրայ, կը հոսի լուսեղէն գետը, որ կը յուզուի ձկնորսի նաւակներուն թիթեւ թխակներէն, եւ ուր զեկի ներքեւ կը շառաչեն՝ աշխարհ Մոսկուան իրենց ցորենով անուցանող ուստական աւելի բարեբեր գաւառներէն եկած ակաղձուն տափանաւեր։ Միւս կողմը, կ'աճի կաղնիներու անտառ մը, որուն սահմանակէտին վրայ կը ճարակին անթիւ ոջիտարներու հօտեր. հոն, մասաղաւթի հովուհիները՝ ծաւերուն հովանիին ներքեւ նստած՝ իրենց պարզ ու մեղմաւոր ձիւքերը կ'երգեն ամառուան այնչափ մենակերպ օրերուն երկարութիւնը կարճելու համար։ Քիչ մը աւելի հեռուն, հնամեայ կնձիւներու թանձրափիտ կանաչութեան մէջ կը շողջղան Ս. Դանիէլի մենաստանին ոսկեղբուրդ գմբէթները, ա՛լ աւելի հեռուն, գրեթէ հորիզոնին սահմանածայրը, կ'երեւան շնճղակներուն կապտորակ լեռները։ Զախ կողմէն, կը շլաքուին լայնածաւալ դաշտեր՝ ցորենով ծածկուած, անտառակներ, երեք կամ չորս գիւղեր եւ, հեռուն, Քոլոմէնսքօէ գիւղը իր բարձրակառոյց սպարանքով։

Յաճախ կ'երթամ այն տեղ, գրեթէ ամէն

տարի կ'երթամ հոն գարունը ողջունելու : Հոն կ'երթամ նաեւ աշնանային ամպամած օրերը՝ բնութեան հետ հեծելու համար : Քաւիններն անեղագոյշ կը մոնջեն լքուած մենաստանին որմերուն , բարձր խոտերով ծածկուած շիրիմներուն , ու նսեմ նորանցներուն մէջտեղէն : Հոն , մահաշջուկ յիշակերտներուն աւերակներուն կրթնած , կ'աւնկնդրեմ՝ անցեալին անգուցիւն մէջ սուգուած ժամանակներուն խուլ հեծութեանը , որ սարսափով ու սարսուռով կը համակէ սիրտս : Երբեմն խըցիկներէն ներս կը մտնեմ ու մտքիս մէջ կը պատկերացնեմ զանոնք՝ որ ապրիցան այդ յարկերուն տակ—տխրազգեցիկ մտապատկերներ : Հօս , կը տեսնեմ գորշահեր ծերունի մը՝ որ , ինչեղութեան պատկերին առջեւ ծնրադրած , Տիրովմէն կը հայցէ բնդհուպ ազատել զինքը իր երկրային կապերէն , ըստ որում իրեն համար կեանքը շունի այլ եւս հաճոյքներ , իր բոլոր զգացումները մեռած են՝ տառապանքին ու տխրութեան զգացումէն զատ : Հօն , նորատի աբեղայ մը , դալիահար գէմքով , նուաղիտ աչքով , մտախոհ կը գիտէ դաշտավայրը՝ իր պատուհանին վանդակապատներուն մէջտեղէն . կը տեսնէ հրճուալից թռչունները՝ որոնք ազատօրէն կը նաւեն մթնոլորտին կոհակներուն մէջէն . կը տեսնէ զանոնք , ու իր աչքերէն դառն արցունքներ կը հոսին : Նա կը հիւժի , կը ծիւրի , կը ցամքի , ու զանդակին մեղամաղձիկ զօղանջիւններն ինձ կը նախաձայնեն անոր կանխահաս մահը : Ուրիշ անգամներ , տաճարին դռներուն վերեւ , ակնապիշ կը գիտեմ պատկերն ա՛յն հրաշքներուն՝ որոնք կատարուած են այս տեղերը :

2

ԲԱԺԱՆՈՒՄԸ

(Քարաւղինի Նամակահիւհն ֆադուած)

ՏԳԷՐ, 18 Մայիս 1789

Զատուեցա՛յ ձեզմէ , սիրելի բարեկամներս , զատուեցա՛յ ձեզմէ : Բայց սիրտս ձեզ կը մնայ կցորդուած ամենագոյն զգացումներով , եւ կը հետանամ ու տակաւ պիտի հեռանամ անգողար ձեզմէ :

Ո՛վ մարդկային սիրտ , ո՞վ կրնայ գիտնալ թէ ի՛նչ է ուզածդ : Այնքան տարիներէ հետէ այս ճամբորդութիւնը իմ երեւակայութեան ամէնէն հաճոյալի երազն էր : Ո՛չ ապաքէն խանդավաւօրէն կ'ըսէի մտովի , վերջապէս , ընդհուպ պիտի մեկնիս : Ո՛չ ապաքէն ուրախութեամբ կ'արթննայի ամէն սուսուտ : Ո՛չ ապաքէն հաճութեամբ կը նիւնէի՝ ըսելով իւրովի , պիտի մեկնիս : Ո՛րչափ ժամանակ անկարող եղայ մտածումիս , մտազբաղումիս առարկայ ընել ուրիշ բան՝ բայց միայն ճամբորդութիւնս : Ո՛չ ապաքէն կը համիէի օրերն ու ժամերը : Բայց երբ եկաւ ըղձացում զոր , սկսայ վշտագնիլ : Առաջին անգամ ըլլալով , պայծառօրէն երեւակայեցի թէ հարկ էր զատուիլ անոնցմէ՝ որոնք աշխարհի մէջ սիրեւագոյն են ինձ , բոլոր այն բաներէն՝ որոնք կը կազմեն իմ բարոյական էութիւնս , եթէ կարելի է ըսել այսպէս : Ամէն ինչ որ աչքիս կը հանդիպէր , գրասեղանը , ուր քանի մը տարի թղթի վրայ թափած եմ խորհրդածութիւններուս ու զգացումներուս վաղահաս արդիւնքները , պատուհանը , որուն մօտ նստած էի մեղմազձոտ , եւ ուր արեւածաղը յաճախ գամած է զիս , գոթածեւ տունը , գիշերային ժամերուն մէջ իմ խոհմանքուս սիրական օթարանը , մեկ խօսքով , ամէն ինչ որ աչքիս կ'երեւար , ինձի համար մէյ մէկ թանկագին յիշատակ էր անցեալ տարիներու , կեանքի մը՝ որ թէեւ մինչեւ այն ատեն զեղուն չէր գործունէութեամբ , բայց ճոխ էր մտածումներով ու զգացումներով : Այս անգոյս առարկաներէն բաժնուեցայ՝ իբրեւ վաղեմի բարեկամներէ . նոյն իսկ ա՛յն պահուն՝ ուր սիրտս յուզուած , փլծկած էր , վրայ հասան իմիներս , սկսան լալ , խնդրելով որ չքանեմ զիրենք , այլ վերագարծիս՝ իմ հետ առնեմ տանիմ : Արցունքները տարափոխիկ են , բարեկամներս , մանաւանդ ոչոպիսի պարաքաներու մէջ :

Բայց զձե՛զ կը սիրեմ՝ ամէնէն առաջ ու ձեզմէ՛ հարկ էր զատուիլ : Սիրտս ա՛յնչափ յուզուած էր այս զգացումներէն , որ կը մոռնայի խօսիլ , բայց ի՞նչ ըսէի ձեզ : Ա՛յն վայրկեանք՝ ուր հրաժեշտի ողջոյններ փո-

խանակեցինք, անոնցմէ է՝ զորս տպագային մէջ հաղարարս արտրեկի վայրկեաններ դժուարաւ պիտի կարենան համալրուել: Անձկալի բարեկամս Պ . . . զիս առաջնորդեց մինչեւ քաղաքագրոսն պատնէշները, ուր ողջագործեցինք զիրար՝ եւ՝ առաջին անգամ ըլլալով՝ տեսայ թէ արցունքներ կը հոսէին իր աչքերէն. նստայ կառքիս մէջ, ակնարկ մը ձգեցի Մոսկուայի վրայ, ուր կը թողուի այնքան սրտահատոր սիրելիներ ու մնա՛ք բաւրովս ըսի: Զանգակիկը հնչեց, ձիերը յառաջ խաղացին ու ձեր բարեկամն աշխարհի մէջ միայնակ մնաց, սիրտը սրբացած:

Բովանդակ անցեալը երազ մը, ստուեր մըն է այլ եւս: Ա՛յն, ո՛ւր են այն ժամերը ուր սիրտս տրտմութենէ այնչափ անխառն էր ձեր մէջ, սիրելի բարեկամներ: Եթէ ամէնէն երջանիկ մարդը տեսնէր յանկարծուող թէ ապագան կը բացուի իր առջեւ, սիրտը պիտի դողար ահաբեկ, լեզուն պիտի կապուէր նոյն իսկ ա՛յն վայրկենին՝ ուր պիտի կարծէր թէ կրնայ ինքզինքը զստել ամէնէն երջանիկը մահկանացուներուն մէջ:

Ամբողջ ճամբորդութեանս միջոցին բնաւ ուրախ մտածում մը չունեցայ. երբ վերջին կայարանը հասանք, ցաւս այնքան սոստկացաւ՝ որ գիւղային պանդոկի մը մէջ, քանի մը ծաղրանկարներու հանդէպ, փափաք կը զգայի, ինչպէս կ'ըսէ Շէյքսպիրը, լալու սրտովս համակ: Ամէն ինչ որ լքած էի, ինծի երեւցաւ այնպիսի՝ գորովալարժ կերպարանքով մը. . . : Բայց բաւական է, բաւական: Ինքզինքս դարձեալ կը գտնեմ արտակարգ մեղսավորութեան մը մէջ, մնա՛ք բարով: Աստուած միսիթարանք չնորհէ ձեզ, Յիշեց՛ք ձեր բարեկամը, բայց առանց բնաւ արամութիւն զգալու:

3

ԲԱՐԻՁ

(Քառուղիքի նամակաւիճակն փաղտած)

ԲԱՐԻՁ, 2 Ապրիլ 1790

Բարի՛ց կը գտնուիմ: Այս մտածումն իմ հոգիս մէջ յառաջ կը բերէ չգիտեմ ի՛նչ մաս:

նաւոր, արագ, անբացատրելի, գեղազմայլ յուզում մը. . . : «Բարի՛ց կը գտնուիմ» կ'ըսեմ իւրովի, ու կը վազեմ փողոցէ փողոց, Թիւրքերիէն Շանգ-Էլիզէ, յանկարծ կանգ կ'առնեմ, ամէն ինչ կը դիտեմ անակնկալ հետաքրքրութիւնով մը: Խուները, կառքերը, մարդերը, եւ հազարումէկ գողափարներ կ'արթննան մտքիս մէջ: Ինչ որ ինծի ծանօթ էր նկարագրութիւններով, հիմա իմ աչքերս՝ վա կը տեսնեմ, կը հրճուիմ ու կը բերկրիմ ա՛յն կենդանի խմբանկարին վրայ՝ զոր կը ներկայացնէ աշխարհի ամէնէն մեծ ու ամէնէն հոգեկաւոր քաղաքը, քաղաք հրաշալի, եզակի մը՝ իր տեսարաններուն այլազանութեան տեսակէտով:

Հինգ օրեր անցան ինծի համար իբր հինգ ժամեր, ալուսկի, ամբոխի, թատրոններու, Բալէ-Ռուայալի դիւթական ընդարձակ սրահին մէջ, Հոգիս առի է բուռն տպաւորութիւններով, բայց ես չեմ կրնար ինքնին վերահասու ըլլալ անոնց, եւ ի վիճակի չեմ ձեզ ըսելու կապակից բան մը՝ Բարի՛ց մասին: Թողէ՛ք որ յագենայ հետաքրքրութիւնս: Այնուհետեւ առիթը պիտի ներկայանայ գնահատելու, նկարագրելու, գովելու, քննադատելու: Առ այժմ, ձեզ դիտել պիտի տամ միայն մէ՛կ բան՝ որ ինձ կը թուի թէ Բարի՛ցի գլխաւոր յայտանիշն է, ժողովուրդին անշուք աշխուժութիւնը՝ իր շարժումներուն մէջ, անոր զարմանալի արագութիւնը՝ խօսելու եւ գործելու մասին: Հոս ամէն մարդ սրարշաւ կը զրիմէ որ եւ է նպատակի մը: Կարծես թէ բոլոր մարդիկ կը հետապնդին իրարու. հետամուտ են մտածումներու, թւած պահուն կ'որտան զանոնք, կը նախազգան թէ ի՛նչ ըսել կ'ուզէք, որպէս զի ըստ կարեւորն փութացնեն ձեր փափաքին իրականացումը: Ի՛նչ տարօրինակ հակադասութիւն կը կազմեն, զոր օրինակ, ծանրաբարոյ Հելսեփապիները, որոնք կ'անոնաւոր քայլերով կ'երթան միշտ, ամենամեծ ու չափութիւնով կ'ունկընդորեն ձեզ, այնպէս որ երկշտ ու համետե՛ղ զոր մարդը կը շիկնի, որոնք դարձեալ կ'ունկընդորեն ձեզ նոյն իսկ երբ վերջացուցած էք ձեր խօսքը, որոնք կը կըլեն ձեր բառերն ու ա՛յնչափ դանդաղորէն ա՛յնչափ խոհեմօրէն կը պատասխանեն՝ վախ-

նալով որ մի՛ գուցէ հասկցամ չորան ձեր միտքը : Իսկ Բարկզցին կ'ուզէ միշտ կռահել Դեռ ձեր հարցումին վերջը բերած չէք , եւ ահա նա արդէն իր պատասխանը քեզ իմացուցած , խոնարհութիւն մը բրած ու անբեւութացած է :

Կարին Յանատարեան Վարժարան

Թարգմ. Ա. Ն. Թ.

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Կիւլպէնկեան բարեհամբաւ գերդաստանին պետը , Պատրիկ էֆ. Կիւլպէնկեան , արժանացաւ Կայսերական նոր շնորհի մը՝ ստանալով Բ. կարգի Մէճիտիյէ պատուանշան : Պատրիկ էֆէնտի՝ իմ վարած առեւարական ու սեղանատուրական ընդարձակ գործառնութիւններովը եւ թէ՛ իբրեւ անգամ Օսմ. Առեւտրական Սենեակին՝ արժանաւոր համբաւ մը կը վայելէ եւ յարգուած ու համակրելի անձնաւորութիւն մըն է : Ազգ. շըրջանակի մէջ՝ իր արդիւնաւոր առեւտրականութիւնը Ազգ. Հիւանդանոցի Հոգաբարձութեան եւ այդ Հաստատութեան նախարար անձնուէր ջանքերն ու զոհողութիւնները՝ հանրային շնորհակալութեան իրաւունք տուած են իրեն , եւ Կայսերական բարձր գնահատումը , որուն կ'արժանանայ այս անգամ , բերկրութեամբ կը լեցնէ բոլոր զինքը ճանչցողները , անձամբ կամ անունով :

Կայս. գնահատում . — Գոհութեամբ կը ծանուցանենք թէ Վեհ. Սուլթանը բարեհամբաւ է Գ. կարգի Օսմանիյէ պատուանշան շնորհել Կեսարիոյ առաջնորդ Տ. Տրդատ եւ պիսիկ. Պալեանի եւ Բաղէշի առաջնորդ Տ. Եղիշ Մ. Վրդ. Չիլինկիրեանի , եւ Գ. կարգի Մէճիտիյէ պատուանշան՝ Արարիկի առաջնորդ Տ. Մուշեղ Մ. Վրդի , Էրզրումի առաջն. տեղապահ Տ. Զուհէն Մ. Վրդի , ինչպէս նաեւ Վանայ եւ Ուրֆայի տեղապահներուն՝ Տ. Սահակ եւ Տ. Անանիա վարդապետներուն , Շապին Գարաշիտարի եւ Երզնկայի առաջնորդներուն՝ Տ. Սմբատ եւ Տ. Դանիէլ վրդապետներուն , Պարբերդի Պատր. Նորնտի փոխանորդ Տ. Եղնիկ Մ. Վ. Գարիբեճեանին , Մուշի Պատր. փոխանորդ Տ. Ստորով Մ. Վրդի եւ Արմաշի վանքին միաբան Տ. Բարզէն Մ. Վրդի : Ս Պատրիարք Հայրն անձամբ յանձնեց պատուանշաններն այն եկեղեցականներուն որոնք մայրաքաղաքս կը գտնուին եւ միւսներն հետագորաւ շնորհատուրեց :

Նոյնպէս գոհութեամբ կը ծանուցանենք

թէ Բ. կարգի Մէճիտիյէ պատուանշան շնորհուած է Պատրիարքարանի Ա. Գործակաւար Տէր Ներսէսեան Տրդատի էֆի , եւ Գ. կարգի Մէճիտիյէ պատուանշան՝ Բ. գործակաւար Յարութիւն էֆ. Գասպարեանի ինչպէս նաեւ ծանօթ գրագէտ-դաստիարակ Ռէթէս էֆ. Պէրպէրեանի , Ազգ. Հիւանդանոցի գրասենեակի տեսուչ Մաքսուտ էֆ. Խլատավերտեանի , եւ Գ. կարգի Օսմանիյէ պատուանշան՝ Բ. Դրան իրաւագէտ խորհրդականներու օգնականներէն Պօլոս էֆ. Քէրէստէճեանի , որոնք բազմաթիւ շնորհաւորութիւններ ընդունեցին :

Երուսաղէմի Պատր. Փոխանորդ Տ. Գէորգ եպիսկ. Երէցեանի եղբորորդին՝ Պ. Յարութիւն , քսան տարեկան յուսալից երիտասարդ մը , մեռեր է Ռումանիոյ մէջ : Երէցեան Սրբազան կարի զգածուած է այս գոյժէն որ հետագորաւ հաղորդուած էր իրեն : Մեր խորին ցաւակցութիւնը կը յայտնենք Ն. Գերապատուութեան՝ իր ընտանեկան այս դառն սուգին առթիւ :

Տ. Յակոբ եպիսկ. Առն ընդունած է Սամսոնի եւ Ճանիկի առաջնորդական պաշտօնը եւ ձօն օրէն մայրաքաղաքս պիտի գայ Իզմիրէն :


Բիւզանդիոնի Տէր եւ Տնօրէն Բիւզանդ էֆ. Քէչեանի ծագկահասակ դուստրը , Օր. Շուշանիկ , որ երկու չարաթ առաջ Թագսիմի կողմը քառամարակ արշաւող ձիէ մը ոտնակոխ եղած էր ու երեսնէն ծանրապէս վիրաւորուած , ապաքինման ճամբուն մէջ է բարեբաղդարար՝ շնորհիւ բժշկական ճարտար դարմաններու եւ ծնողական գուրգուրալից խնամքներու : Կր մաղթենք ընդգիւյթ եւ կատարեալ ապաքինում : մեր մեծարոյ պաշտօնակցին սիրտսուն աղջկան :

Հարսանիք . — Երկուշաբթի օրը Գաւրգիւզի Ա. Թագաւոր եկեղեցիին մէջ հանդիսաւորապէս տեղի ունեցաւ Արմաշի Դպրեւանքին վերատեսուչ Տ. Եղիշ եպիսկ. Դուրեանի եղբոր՝ Ազրիպաս էֆի աղջկան՝ Օր. Արուսեակ Դուրեանի պսակադրութիւնը՝ Ռօսիա ապահովագր. ընկերութեան քննիչ Օնիկի էֆ Մինասեանի հետ , նախագահութեամբ Ս Պատրիարք Հօր որ չըջապատուած էր Արմաշի միաբան բազմաթիւ վարդապետներէ , Պատիկ արարողութենէն ետքը , եկեղեցական դասը եւ բոլոր հարսնեւորք առաջնորդուեցան Դուրեանց բնակարանը ուր շնորհաւորութիւններ եղան նորապսակ ամուլին :

Արժօնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն Ե. Մ. Ս. ՏԹԷՆՈՍԵԱՆ

Կ. Պոլիս, Ֆինանսըլար եօզուլու, Թիւ 27



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի խղիւրձմըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր

Ձեռքի, ոտքի եւ ձեռքի ու ոտքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ԲԵՐԱ, ՄԵԾ Ժողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դիմաց:

ԿԱԼԱԹԱ } 1. Սինկեր խան, Թիւնէլին հտեւը:
2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին Դիմաց:

ՊՈԼԻՍ } 1. Սուլթան Համամ:
2. Սուլթան Պէյազիտ:

Դասերը եւ նորոգութիւնք ձրի:

Կատարեալ երաւեստութիւն

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ

ՍՈՍՆԿԵՐԻ
ՄԵՔԵՆԱՆԵՐԸ



ՌՕՍԻԱ — ROSSIA



ԱՊՍՆՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1898 տարւոյ մէջ գանձուած ապահովագրիւններ

34,775,642 Փրանք

Երաշխաւորութեան գումար

121,765,333 »

1881էն ի վեր ապահովագրեալներուն վճարուած

164,172,000 »

Կեդրոնացեղի, Ղալաթիոյ քաղաքին վրայ, Մաքսաւան հին տեղը

Ընդհ. Գնահիշ
Ա. ՀԻՒՐՄԻԻԶ


Ընդհ. Գործակալ
ԲԷՆՅՈՐ ՌԷՐԲԷՆ

Ա Ր Ի Ս ԵՒ ԸՆԿ

ՇՈԳԵՇԱՐԺ ԳՈՐԾԱՏՈՒՆ

ՀՈՏԵՂԻՆԱՑ ԵՒ ՕՃԱՌԻ

Հիմնեալ 1889 ին



Վաճառանիշ

Կ. ՊՈԼԻՍ

ԹԱՀՏԱՔԱԼԷ



Արուեստագիտական վերջին կատարելագործութեամբ եւ առաջնակարգ մեքենաներով օժտեալ եւ եւրոպացի վարպետի մը հսկողութեան ներքեւ կ'արտադրէ ամենաշուքը հոտեղէններ ինչպէս նաեւ թուալէթի հոտաւէտ եւ լուացքի սարգ օճառներ։ Տեսակի ազնուութեան մասին եւրոպական ամենամեծ գործարաններու ապրանաւց դէմ մրցելու առաւելութեան կը միացնէ գիներու գերազանց աժանութիւնը։ Փափաքողներուն՝ քաթալօլը ձրի կը ղրկուի։

Մեծաքանակ գնումք բնել ուզողները կրնան դիմել Կ Պոլսոյ մէջ ՕՐՕՍՏԻ ՊԱՔԵՒԿ ԻՆՃԻՃԻԵԱՆ ՈՐԴԻԲ վաճառատունները, իսկ գաւառներու եւ օտար երկիրներու մէջ գիմել գործակալութեանց որ ի ստորեւ, ուր պիտի գտնեն նմոյշներու ցուցադրութիւն մը՝ պէտք եղած բոլոր տեղեկութիւններով։

ԲԱՐԻՋ. — ՊՊ. Լաքառեռ Որդի եւ Ընկ. 28 Ռիւ Շաքոտեռ։
 ՊՈՄՊՍՑ. — ՊՊ. Ապքար եւ Ընկ.
 ԱՂԵՔՍԱՆԳՐԻԱ. — Պ. Մ. Գալֆանան.
 ԳԱՀԻՐԷ. — Պ. Հ. Ռոզանթալ.
 ՌՈՒՍՃՈՒԳ. — Պ. Պ. Կ. Ինճիճեան որդիք.
 ՎԱՌՆԱ. — Պ. Կեռոն Արտիքի.
 ԻՋՄԻՐ. — Պ. Յակոբ Մոմճեան

ՋՄԻԻՌՆԵԱ. — Պ. Հայնրիխ Վառնիկ.
 ՍԵԼԱՆԻԿ. — Պ. Տիեռ Ֆերնանտեզ.
 ԻՒՍԿԻԻՊ. — Պ. Մ. Քափուանո.
 ՊԵՐՈՒԹ. — Պ. Ֆրանքել Շիֆֆեր.
 ՍԱՄՍՈՆ. — Պ. Պ. Պետրոսեան Եղբարք.
 ՏՐԱՊԻՋՈՆ. — Պ. Արիս Կ. Ինճիճեան.
 ՍԵՐԱՍԵԱ. — Պ. Պ. Վ. Ս. Մեծատուրեան.
 ՌՈՏՈՍԹՕ. — Պ. Յակոբ Բոօփատալ

ՀԱՍՏԱՏԵԱԼ 1884ԻՆ

ՀԱՆՐԱԾԱՆՈԹ ՇԱՊԻԿԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՏԵՐ

ԱՐԴՈՒՋԱՐԴԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Մ. ՏԵՐ-ԴԱԻԻԹԵԱՆ

Թիւ 85 — Կալաթա, Վոյվոսա փողոց — Թիւ 85

Խիստ խնամով ու տարապայման աժան գիներով չափու վրայ կը պատրաստուին աճէն տեսակ չապիկ, օձիք, թեւնոց, գիշերազգեստ ու ներքին ճերմակեղէններ։

Միայն Ֆրանսական ու Անգլիական ընտիր տեսակ կերպաներու զանազանութեամբ օժտուած սոյն գործարանը տրամադիր է ընդունիլ ու կատարեալ հոգածութեամբ պատրաստել հարսանեաց ճերմակեղէններու յանձնարարութիւններ։

Կը ծախուին վերջին նորաձեւութեամբ խիստ ճաշակաւոր ու միշտ աժան գիներով օձիք, թեւնոց, ֆլանէլ, գուլպայ, թաշկինակ, ոսկեզօծ կոճակներ, փողկապ, գրամապնակ, զմեյի «Չէֆիլա», խոզանակ, սանտր ու անուշահոտութեանց լաւագոյն տեսակներ։

Մ. ՏԵՐ-ԴԱԻԻԹԵԱՆ վաճառատունը նորաձեւութեան, ապրանաւց ազնուութեան, յանձնարարութեան խնամով պատրաստութեան, ու գիներու աժանութեան տեսակէտով վստահելի ու լաւ յանձնարարելի լաւագոյն տուներէն մէկն է։

ԳԻՆԵՐԸ ՈՐՈՇԵԱԼ ԵՆ